

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԱԲՈՎՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՔՈԼԵՋՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՈՐԱԿԻ ԵՎ ԱՐԴՅՈՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՐՑՄԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման (այսուհետ՝ ուսանողական հարցման) կանոնակարգը սահմանում է ԱՊԷՔ ուսանողների կողմից քոլեջի դասախոսական կազմի դասավանդման որակի և արդյունավետության գնահատման, հարցման անցկացման և արդյունքների օգտագործման կարգը:

1.2. Ուսանողական հարցումն անցկացվում է «Կրթության մասին» ՀՀ օրենքի և ԱՊԷՔ կանոնադրության պահանջների հիման վրա և համարվում է ԱՊԷՔ ուսանողների ուսուցման որակն ապահովող գործառույթներին մասնակցելու և դասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը գնահատելու իրավունքի դրսևորում:

1.3. Ուսանողական հարցման կանոնակարգը հաստատում և դրանում փոփոխություններ ու լրացումներ կատարում է ԱՊԷՔ Կրթության որակի ապահովման կենտրոնը:

2. Ուսանողական հարցման անցկացումը

2.1. Առկա ուսուցման համակարգում ուսանողական հարցումն իրականացվում է յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո, հեռակա ուսուցման համակարգում՝ նախորդ ուստարվա տվյալների հիման վրա: Ավարտական կուրսերում 2-րդ կիսամյակի վերաբերյալ հարցումն իրականացվում է քննաշրջանի ավարտից հետո՝ մինչև պետական ամփոփիչ ատեստավորումը:

2.2. Ուսանողական հարցումն իրականացվում է ԱՊԷՔ Կրթության որակի ապահովման կենտրոնի կողմից:

2.3. Ուսանողական հարցումն անցկացվում է սույն կանոնակարգին կից գնահատման հարցաթերթով, որում ուսանողը 5 միավորից բաղկացած սանդղակով գնահատում է առաջադրված հարցերը կամ «այո», «ոչ» տարբերակների միջոցով հաստատում կամ հերքում տրված հարցերը:

2.4. Գնահատման արդյունքները ներկայացվում են յուրաքանչյուր դասախոսի (դասընթացի) համար հաշվարկված գնահատականների միջին թվաբանականով:

2.5. Ուսանողական հարցումն անանուն է:

2.6. Ուսանողական հարցումն անց է կացվում Կրթության որակի ապահովման բաժնի կողմից սահմանված և առարկայական հանձնաժողովների կողմից նախապես ներկայացված ժամանակացույցի համաձայն՝ դասաժամերին, խմբի ուսանողների առնվազն 70-90%-ի մասնակցության պայմաններում:

2.7. Հարցումը ԱՊԷՔ-ում իրականացվում է էլեկտրոնային տարբերակով:

3. Ուսանողական հարցման արդյունքների մշակումը և պահպանումը

3.1. Ուսանողական հարցման արդյունքները մշակվում են ԱՊԷՔ Կրթության որակի ապահովման կենտրոնում:

3.2 Ուսանողական հարցման արդյունքները և գնահատված հարցաթերթերը 5 տարի պահվում են ԱՊԷՔ էլեկտրոնային բազայում:

4. Ուսանողական հարցման արդյունքների օգտագործումը

4.1. Ուսանողական հարցման արդյունքները Կրթության որակի ապահովման կենտրոնը ներկայացնում է համապատասխան առարկայական հանձնաժողով, անհրաժեշտության դեպքում նաև այլ ստորաբաժանումներ:

4.2. Ուսանողական հարցման արդյունքները քննարկվում են համապատասխան առարկայական հանձնաժողովներում: Քննարկման արդյունքում մշակվում են համապատասխան առաջարկություններ և երաշխավորություններ՝ ուղղված դասախոսի դասավանդման որակի բարելավմանը:

4.3. Առարկայական հանձնաժողովների նախագահները պարտավոր է կազմակերպել հարցման արդյունքների քննարկում դասախոսների և ուսանողների շրջանում՝ մեկ ամսվա ընթացքում: Դասախոսն իրավունք ունի առարկայական հանձնաժողովի նախագահի ներկայությամբ ծանոթանալու հարցման՝ իրեն վերաբերող կարծիքներին:

4.4. Ուսանողական հարցման անհատական արդյունքները հրապարակվում են միայն տվյալ առարկայական հանձնաժողովում:

4.5. Ուսանողական հարցման արդյունքներն օգտագործվում են՝

- ✓ աջակցելու դասախոսներին՝ վերլուծելու, զարգացնելու իրենց դասավանդման մոտեցումները և կիրառվող մեթոդները,
- ✓ դասախոսների պաշտոնակալման, առաջխաղացման և խրախուսման նպատակով: